մեծաւ ուրախութեամբ կը յայտնեմք մեր շնորհակալութիւնը որպէս քաղաքիս ջերմեռանդ Հայխմբին և տ. Արամեանքեանցին, նոյնպէս և ամենայն ազգասէր դերասանաց և դերասանուհեաց։

Իսկ ես մեծայոյս և ուրախ եմ՝ թէ Նորէան քաղաքիս համայն հայերը այս միջոցաւ ևս ոչ միայն պիտի ծանօթանան Ազգային անցից, այլ և նիւթականապէս օժանդակ պիտի լինին ըստ ազգասիրական զգացմանց՝ Հայոց երկսեռ դպրոցաց ազատաքայլ զարգացման և յառաջադիմութեան, բարի օրինակ գծագրանալով մեր Ազգայնոց"։

---

Կարս. — Ինչպէս որ արդէն Պօլսոյ Ազգային լրագրաց միջոցաւ տեղեկացած եմք. նոյնպէս Կարուց մեր թղթակիցը կը հաղորդէ մեզ, թէ՝ Տաճկաստանի մէջ պապական Հայ կղերը մեծ ճիգով և վերջին ջանքով կը տքնի Հայաստանեայց ս. Եկեղեցւոյ առ պաշտօնեայս՝ Արք եպիսկոպոսունս՝ Եպիսկոպոսունս և Վարդապետս ևս առ իշխանազուն աշխարհականս անգամ ս. Պապին հրաւիրագրին օրինակները առանձին առանձին գրութեանց մէջ ներփակեալ յղելով, գրաւել զնոսա. որպէս զի ներկայ տարւոյ դեկտեմբերին մէջ ՚ի Հռոմ գումարուելիք ժողովքին երթալու բարեհաճին։

Այսպիսի մի գրութիւն հանդերձ օրինակաւ հրաւիրագրի Պապին. նաև առ շնորհափայլ Կիւրղոսի Վարդապետն Կարուց վիճակին բարեգէտ Առաջնորդն ուղղուած լինելով ՚ի կողմանէ Ազգվուինոյ գերապայծառ եպիսկոպոսին. և ՚Նորին Արժանապատուութիւնը զարժանին պատասխանը չգլուցած լինելով, օրինակները մեզ խրկած է մեր թղթակիցը, զորս կը հրատարակեմք։

Այս առթիւ աւելորդ է ասել, որ պապական կղերաց այսպիսի զուր ջանից և տքնութեանց արդիւնքը՝ ուրիշ ոչինչ անհնար է ծնանիլ, բայց եթէ՝ մի և նոյն Հայրենեաց որդւոց՝ արենակից եղբարց, Հայ Ազգի մէջ հերձուած և անջատում մտաց ախտքը փոխանակ ընաջինջ բառնալոյ և կրկին ազգային ոգւով ՚ի մի սիրտ և ՚ի մի սէր միացնելոյ, ընդ հակառակն՝ աւելի ևս ողբալի գժտութեանց և անմիաբանութեան ասպարէզ բանալ։ Օ՜ որ չեմք կարող առանց մեծ և խորին ցաւ ու կսկիծ զգալու ՚ի սիրտ և ՚ի հոգի՝ նկատել այսպիսի զուր և ընդունայն աշխատութիւնքը։

Սակայն զի մեք կ՚ըղձամք և ակնդէտ կ՚սպասեմք, որ մեր սիրելի ազգակիցքը՝ պապական հայ կղերը և հայրենակէր ժողովուրդը՝ մոռանալով ինչ որ ցարդ ժամանակի դառն բերմունքներէ պատահած ու անցած են, և գիտնալով որ անհետացած են այնպիսի դարերն ևս, և ազգային ոգւով զգալով ճիտը՝ զգուշանան ինքեանց, որ օտարութեան փարախը ընթանալով՝ ո՛չ կը հեռանան Հայաստանեայց Առաքելական ս. Եկե-

ղեցւոյ և Ազգի նախնի սրբազան Հարց և բարենախանձ ու պանծալի քաջարանց շաւիղներէ՝ 'ի կորուստ անուան Հայ Ազգութեան ։

---

Պատճէն Նամակի Արդուինոյ Եպիսկոպոսին Հայ Հռովմէականաց.

Գերապատիւ Տեառն խնդալ․

ԶՀռովմէական սրբազան զհրաման 'ի գործ դնել կամեցեալ մեր, ձեռնամուխ լինիմք փանաքի գրութեամբս, իրազեկ առնել Գերապատիւ Տեառն զսիրատենչ հրաւէրն Սրբազան Քահանայապետին մերոյ Պիոսի իններորդի, 'ի տիեզերական ընդհանուր ժողովն. զորս ունի գումարել 'ի Հռովմ յամի հազար ութ հարիւր վաթսուն իններորդի. և յինն յամսեան դեկտեմբերի, որպէս և ծանուցանէ յիւր հրաւիրական տետրակն ։

Արդ նոյն ինքն ծայրագոյն Քահանայապետս կամելով տալ զհրաւէրն և միանգամայն սփռել զհրաւիրական տետրակն ընդ ամենայն քրիստոնեայ եպիսկոպոսունս և առաջնորդս, մեզ պատուէր հրամանի տուեալ է 'ի դիմաց իւրոյ Վեհափառութեան՝ զի ընծայեսցուք իւրաքանչիւր Եպիսկոպոսաց և Առաջնորդաց, և իշխանաւորուն աշխարհականաց անգամ, որք գտանին մերոյ թեմական վիճակին, թէ համազգի իցեն և թէ օտարազգի ։ Ահա և մեք փութամք զնորայն պատուէր կատարել առ Գերապատուութիւնդ առաքելով զՆորին ծայրագոյն Քահանայապետին զթուղթն հրաւիրանաց՝ զիտալերէնն և զնորին հարազատ զթարգմանութիւն 'ի հայ բարբառ ։

Սպասելով դարձի պատասխանին Մնամք սիրով Գերապատուութեանդ

Խ. Ծ. Ա. Վ. Հալաճեան եպիսկ.
29 յունվ. 1869 Արդվինոյ եւ այլն
Յեպիսկոպոսարանէս ։

---

Պատճէն պատասխանւոյ Առաջնորդին Կարուց առ Գերապայծառն Արդվինոյ.

Գերապայծառ Տեառն խնդալ 'ի Տէր.

Այս օրերուս մեր անուան ուղղուած հասցէիւ նամակ մը առինք, և ինչպէս տեղէ մը եկած նամակը տէր եղողը կը բանայ, այնպէս ալ մենք առանց ուսկից կամ ինչ ըլլալը գիտնալու բացինք. բայց երբ տեսանք որ Ձեր Գերապայծառութեան ստորագրեալ յատուկ մէկ նամակաւ Հռօմի ժողովին հրաւիրանաց հայերէն և իտալերէն տետրակներն էին, և Հայերէնին վրայի մակագիրը ,,Առ ամենայն Եպիսկոպոսունս արևելածէս եկեղեցեաց որք Առաքելապետական Աթոռոյն հետ հաղորդակցութիւն չունին,, էր գրուած. այս օրինակ հրաւէր մը շարժեց մեր զարմանքը երիւք աւելի. զի նախ Եպիսկոպոսացն պատկանելի Աստիճանին վիճակաւորելոց ըլլալուն մեզ վերաբերութիւն չունէր ։ Երկրորդ հաղորդակցութիւն չունենալնիս յայտնի